

Եւանջի առաջնորդութեամբը Թատրոն
 Ներկայացրին 72 թ. Յունիսի 19-ին,
 ծախսն միջից հանելով զուտ օգուտ մը-
 նաց 104 28

Թատրոնի ծախսի մէջ հաշուած էր
 սորբանիկի տան վարձ 10 ռուբ. բայց
 նորա Անդամները ընծայեցին յօգուտ
 աղքատաց այդ դրամը 10

Մի տարվայ ընթացքում պատրաստ
 դումարի տոկոս ստացված է զանազան
 ժամանակում 37 25

Գումարն է 4415 3

Յիշեալ դումարից բաժանուած է մի տարվայ ըն-
 թացքում,

Պարսկաստանից սովի պատճառաւ
 Բազու պատահած աղքատներին հացի եւ
 քանակաւոր հաճախի համար 152 44

Բազուարնակ աղքատաց ալիւր եւ փող 152 90

Շամախեցի, զետեաշարժի պատճառաւ
 Բազու փոխադրուած, աղքատաց ալիւր
 եւ փող 177 47

Ղարաբաղցի Բազու բնակվող կաման-
 ցաւոր աղքատաց 85 28

Ղարսեցի Յովսէփ Սանասարեանցին
 ճանապարհածախս 45

Սպահանցի Աղախան Կիրակոսեանին
 արքունի նլանդանոցում 44 օրվայ հա-
 մար լիճիկու վարձ 16 40

Երեսանցի, Նախիջեւանցի, Նուխեցի,
 Գերրենտցի, եւ Ղալաբեցի Բազու պա-
 տահած անցաւոր աղքատաց 48 45

Աղրատ Ննչեցեալ Թաղման համար . 15 22

Թղթի, ապահովագիր կամ հաշիւ տը-
 պելու համար եւ այլ կարելոր ծախս . 7 60

Մնում է ապառիկ դրամ 16

Եւ դանձապետի մօտ մնում է պատ-
 րաստ դումար *) 468 57

Գումարն է 4415 3

Հաշուեանսութիւնից յետոյ բոլոր անդամները շը-
 նորնովարութիւն արին Հոգաբարձուներից, որոնք
 ջերմեանոց եւ ճիշտ կերպով առաջ են տարել այդ
 գործը: Ընտրուեցան այս անգամ 6 Հոգաբարձուք —

(*) Յիշեալ գումարից այս զտակն Հոգաբարձուք սկսեցին
 բաժանել աղքատաց:

Թ. Աւագ Բանանայ Բուտողեանց, եւ ճեռեւեալ պա-
 րոնայրը — Գ. Գիտարեանց, որ եւ զանձապետ, Բ.
 Սարգիսեանց, Մ. Շահակեանեանց, Յ. Աղամեանց,
 եւ Խ. Կիրիեանց:

Արդէն բացված է ստորագրութիւնը, որի ճեռե-
 ւանքը ինչ կլինի, ժամանակին կայտնուի: Սակայն
 յուսովի է, որ Բազուարնակ Հայերը այդ աղքատա-
 սիրական գործը, ինչպէս սկսել են ջերմեանոցու-
 թեամբ, եւ այսուհետեւ իւրաքանչիւր տարի յառաջ
 կտանեն նոյն սիրովը, այսի առաջ ունենալով անցած
 տարիներում Հայ աղքատների դռնէ ի դուռն Թա-
 փառելը, նա մանտանոց եւ եկեղեցիների դռներում
 խմբովին կանգնելը մուրացկանութեան համար, որ
 կարծես Թէ մէկ նախատիւր էր հարկանում զգա-
 ցողների երեւոյն: Բայց այժմ չէ տեսնվում ոչ կեփ-
 ղեցիների դռները շրջապատած դրանցով եւ ոչ քա-
 ղաքի մէջ դռնէ ի դուռն Թափառելիս:

Երամի Թէ ամեն Հայարնակ քաղաքներում եւս այն
 նպատակաւ կազմուէին ընկերութիւններ, որ ցանկալի
 եւ սիրելի են Աստուծոյ եւ մարդկան:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԻՐՉԱԲԵԿԵԱՆՅ.

Ի 15 Ապրիլ 1875 թ.

Ի Բաթում.

ԳԱՐՁԵԱԼ ԹԷ՛ ՈՒՐ ԵՆ ԱԵԱՐԱՅՐ ԵՒ ՏՂԱՐՈՒՑ.

Էս ամի Թիֆլիսի Մշակ օրագրի № 7 թիւրթի
 մէջին, «էդ էլ քեզ կրետիկայ», վերնագրով՝
 Մկիւրդատէ օտորագրութիւնով յօդուածը ձեռք
 ընկաւ: որ գրուած էր ընդդէմ իմ յօդուածին,
 որ սպուած է անցեալ ամի Արարատ ամառգրի
 մէջն ԺԱ և ԺԲ համարներումը՝ «Ո՛ր են Ա-
 ւարայր և Տղմուտ», վերնագրով, Մինչ չե ձեռ-
 նածուիս լինելս նրա կարծիքներն և եզրակացու-
 թիւնները ջրիլը, քանի մի բառ ասեց չէ աւերող,
 այս ինքն անհասկանալի է ինձ, ինչի՞ց է արդեօք
 պարտն ստիպուած էսպիսի հետաքրքրական ա-
 ոարկայի մասին գրուած յօդուածի տակին՝ իւր
 երեսին դիմակ գնել, անունը փոխել ու ստպարէզ
 դուրս գալ: Համազում եմ, որ Պարոն Մկիւր-
 դատէն է մի և նոյն Պարոն Բաֆին, որ իւրեան
 բնական սովորութիւնովը զանազան դիմակով է
 հանդէս դուրս եկել մինչև ցայսօր օրագրու մն: